

17449

1989

37(47.925)

p-75

1101. Carm  
1101

1101

«Պատմական հայկական լեզուների և գրականության ինստիտուտ»  
2001 292  
Ա. Իսահանյան

БИБЛИОТЕКА  
ИСТОРИКО-ЛИТЕРАТУРНОГО  
И ЯЗЫКОВОГО  
ИЗУЧЕНИЯ  
ИМЕНИ  
МАНУС  
СССР



**ՊԱՐՈՆ ԳԻՒԱՑՈՒ ԻՆՔՆԱԿՈՋ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ  
ԲՐՁՇԻՐԻ ԱՌԹԻՒ.**

Պ. Գիւղացին, չը բաւականանալով իմ տուած պատասխանով, որ ղեկեղուած է («Նոր-Պար») ի 221 համարի մէջ՝ առանձին բքօշխրով աւելի երկարաբանութեամբ կրկնելով նոյնը ստիպում է ինձ պատասխանել իւր տեսակով: Պ. Գիւղացին զպրոցի փակման և բացման պատմութիւնը համառօտակի անցնելուց շատու, գալիս է կանգնում ուղղակի Նորին վեհափառութիւնից զպրոցների համար տուած հրահանգի վրայ, որտեղ որպէս թէ նրա մի չօղուածում ատուած է. «Ո՛ր եկեղեցու անուամբ բացուած է զպրոցը, նոյն եկեղեցու պարտքն է իւր միջոցներով պահպանել նրան և ալլն և ալլն»: Մեր երկսեռ զպրոցները բացուած լինելով սբ. Յովհաննէս մար եկեղեցու անուամբ, նրա իսկ պարտականութիւնն է պահպանել նրանց իւր միջոցներով: Այդ ընդունեցինք. չը հեռանանք այդ հրահանգից: Պ. Գիւղացի, խնդրեմ ասէ՛ք՝ այդ հրահանգի մէջ կան արդեօք աշնալիսի մի չօղուած, որտեղ իրաւունք տրուած լինի զպրոցների հոգաբարձուներին կալքեր կառավարել, փող աւելացնել, տոկոսով տալ, զբաւական վեր առնել: Եթէ սբ. Յովհաննէս մար

2010

37(47.925)  
b-75

եկեղեցու պարտքն է կառավարել իւր դպրոցները, ուրեմն հասկանալի է, որ հոգաբարձութիւնն առանձին գանձարան (касса) չը պիտի ունենայ, այլ նրա կասսան պէտք է լինի եկեղեցին. բայց մեղանում հակառակն է տեսնուած. հոգաբարձութիւնն տոկոսով տուած փող էլ ունի: Պ. Գիւղացի, խէր ընի, ինչ էք լսել, որ մէկ մէկ համարում էք ապարդիւն ժողովները և դուքս բերում միայն աչն, որպէս թէ՛ ևս հրաժարուել եմ փող տալուց, ինձ պատկերացնելով թշնամի դպրոցին. միթէ եկեղեցու շահերը դուր վատնելուց պաշտպանելը վատ բան է: Մուսցութեան էք տուել և մեր մասնաւոր խօսակցութիւնը, որից հետեւեցաւ աչն, որ դուք իրաւունք չ'ունենալով, իբրև ինքնակոչ հոգաբարձու, արտաքու իրաւանց, մտել էք հոգաբարձական ժողովի մէջ, (ի հարկէ աչն էլ աչն ժամանակ, երբ խնամու տունը հարկաւոր է եղել դպրոցի համար վարձելու). ինչի չէք գրում և աչն, որ միշտ առաջարկել եմ, թէ թո՛ղ հոգաբարձութիւնը իւր ունեցած գումարը լանձնի եկեղեցուչն, հրահանգի համաձայն եկեղեցին թող պահպանի դպրոցները. ո՛վ է մեղաւոր, որ հոգաբարձուները իրենց կամապաշտութեամբը, հակառակ վիճակաւոր Առաջնորդի հրամանին, չեն կամենում լանձնել եկեղեցուչն, թէև ալս մասին Սրբազան Առաջնորդը քանիցս հրամայած է, ինչպէս և անցեալ ամի դեկտեմբեր ամսում կրկնել էր իւր նախկին հրամանը հոգաբարձութեան նախագահ և չաջորդ բարձրապատիւ Գրիգորիս հայր սուրբին՝ սորա Տփիսխում եղած ժամանակ: Նախագահը Տփիսիսից վերադառնալով, չալտեց Նորին Բարձր Սրբազնութեան հրամանը. կատարուեց արդեօք. ո՛չ: Զար-

մանալ'ւ բան. մեր հոգաբարձուները կամենում են Առաջնորդի հրամանը ուրիշների համար պարտադիր անել, իսկ իրենց համար ո՛չ. և թէ հոգաբարձուները իրենց վարմունքով պատճառ են դառնում դպրոցների նեղ դրութեան, ո՛վ է մեղաւոր: Միթէ ևս լանցանք եմ գործել, որ Զեր ահնարկած ժողովներում հոգաբարձութեան ուշադրութիւնը հրաւիրել եմ դպրոցների աղբիւրների սպառուելու վրայ. քանիցս չալտնել եմ թէ հոգաբարձուները և թէ նախագահին, որ փողոցում վերջացնել տան անկնիք արդելուած մոմ ծախելը և միշտ լսել եմ պատասխան՝ թէ հնար չը կալ. չը գիտեմ պ. Գիւղացին աչնաեղ էր, թէ ո՛չ. (ա՛խ, կարծեմ աչնաեղ չէր, որովհետև աղջ օրը իւր խնամու տունը դպրոցի համար վարձելու հարց չը կար): Առաջարկեցի, որ հոգաբարձուները խոստովանին իրենց անկարողութիւնը, ևս գրաւականով կը պարտաւորուիմ վերջացնել: Այս իմ առաջարկութիւնը ի հարկէ չէր չարգուիլ, քանի որ խնամութիւն պահելու սովորութիւնը սորանց մէջ ևս թագաւորած էր: Հանելուկը շուտով պարզուեց, երբ նշանադրութեան հանդէս կար հոգաբարձու Մ. Գ.-ի քրոջ տանը. աչնաեղ թէ հոգևորականաց և թէ հանդիսականաց անկնիք մոմ էին բաժանել. աղջ մասին հանդիսականների կողմից աղմուկ բարձրացաւ. աղմուկը դադարեց նրանով, որ հոգաբարձուն խոստացաւ տալ տուգանք լօգուտ դպրոցին տասն ուուրիւ. դպրոցը ստացաւ թէ ո՛չ: Ի հարկէ ո՛չ: Միւս հոգաբարձու քահանայի մօրաքրոջ տղի հարսանիքում ևս նո՛ցը պատահեց: Ինչ մնում է հոգաբարձու Ղ. Ս. Յ.-ին, սորա գուսարն էլ, որ աշակերտուհի է օրիորդաց դպրոցում, ասնից անկնիք մոմ վերց-

րած գալիս է դպրոց, որ աշնտեղից գնալ եկեղեցի. իւր ընկերակից աշակերտուհիները նկատելով մոմի անկնիք լինելը, բռնում են ձեռքն ու չափոնում ուսուցիչներին: Եթէ հողաբարձուները իրենք են նպաստում անկնիք մոմ վաճառելուն՝ ինչպէս կ'արգելեն:

Անցեալ տարի չօգուտ դպրոցի պարահանդէս կադ- մուեց, ժողովրդից բաւականին դուժար ժողովուեց, զըս- րոցը ինչ ստացաւ—50 կոպ. փնաս. պատճառը իրենց չափոնի կը լինի: Հողաբարձուների անտարբերութեան և անհաշիւ գործողութեան մէջ նոյն ինքն «ինքնակոչ» հո- գաբարձուն չէր մեղադրում, միթէ մուռացել է. որ մէկը համարեմ:

1887 ամի սեպտեմբեր ամսում, երբ ժողովրդի մի մասը ժողովելով չաջորդարանը վճուեցին տալ դպրոցին 1200 ուրբլի, այն ժամանակն էլ չէի ուզում տալ, պնդելով իմ իրաւացի պահանջման վերայ. բայց տարածամ լինե- լու պատճառաւ վճարեցի հետզհետէ 1200 ուրբլին, միշտ կրկնելով հողաբարձութեան նախագահին թէ՛ եթէ հրա- հանդի և Սրբազան Առաջնորդի հրամանի համաձայն հո- գաբարձութեան մօտ գտնուած դրամական հաշիւները չը շանձնուի եկեղեցուն և հողաբարձուները դպրոցների եկա- մուտները արթուն հսկողութեամբ չը ժողովին՝ ես ինձ պարտաւոր չեմ համարել առաջիկայ տարին մի բան տալ. աչլպիսով շարունակեց մինչև անցեալ ամի նոյեմբեր ու դեկտեմբեր ամիսները: Նոյն թուի հոկտեմբեր ամսին, երբ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆ Գանձակումն էր, հողաբար- ձուները բանաւոր մի քանի արտօնութիւններ ինդրեցին: Նորին Օծութիւնը բարեհաճեց հրամայել, որ գրաւոր դի-

մն իրեն. արդեօք հողաբարձուները դիմեցին: Ո՛չ: Ի՞նչ կը դիմէին, քանի որ իրենց կառավարութեան ընթացքը բոլորովն հակառակ էր Նորին Վեհափառութիւնից տը- ուած հրահանդին. ընդհակառակն դիմում են Սրբազան Ա- ռաջնորդին և ստանում մի առաջադրութիւն, որ սուրբ Յովհաննէս եկեղեցին ի թիւս միւսոց օժանդակէ դպրո- ցին 1500 ուրբլով \*): Այդ մասին ստանում եմ հոգևոր կառավարութիւնից չ8-ն նոյեմբ. 1888 ամի № 763 հրա- ման, որին չաչարարութեամբ ի 14-ն դեկտեմբերի նոյն ամի պատասխանում եմ. բնթերցողներին աւելի ծանօ- թացնելու համար չաչարարութեանս հետ՝ այն նոյնու- թեամբ արտագրում եմ:

«Ատեանդ հրամանաւ չ8-ն նոյեմբեր ամսուս, № 763, հիմնուելով վիճակաւոր Առաջնորդի առաջադրութեան վե- րայ ի 4-ն նոյեմբեր ամսուս № 711, հրամայէ ինձ նպատամատուց լինելով սբ. Յովհաննէս մալր եկեղեցուց արդիւնքից ամ չամէ անխափան հատուցանել տեղուս երկսեռ դպրոցաց մի հազար հինգ հարիւր ուրբ. ըստ

\*) Ծանօթ. Արդեօք ուսումնարանը ո՞րքան ծախք ունէր ու ո՞րքան եկամուտ, որ հողաբարձութիւնը իւր ժողովի մէջ վըճ- աւեց սուրբ Յովհաննէս մայր եկեղեցու վերայ 1500 ուրբլի, սուրբ Լուսաւորէջ և սուրբ Գէորգ եկեղեցիներէ վերայ 500-ական ու, ընդամենը 2500 ուրբլի: Արդեօք այս հաշիւն ուղիղ էր, քանի որ հող- նախագահի ցոյց տալով հակառակն էր երևում և երբ հարց բարձրացաւ, թէ քանի որ այսքան պահանջ չը կայ, աւե- լորդ փորը Ե՞նչ սէտք է լինի, պատասխան ստացեաց թէ՛ աւե- րջողը կը մնայ դպրոցի գանձարանումն: Ահա թէ ինչի է ձըգ- տում մեր հողաբարձութիւնը:

5 0494-տի



36084-66

օրինակի սբ. Լուսաւորիչ և սբ. Գէորգ եկեղեցեաց քաղաքիս: Առ այս պատիւ ունիմ խոնարհաբար չափոնել թէ՛ տնօրէնութիւն Սրբազան Առաջնորդի սուրբ է մեզ համար ու միանգամայն պաշտելի, քանի որ գործադրուում է մանկտեաց լուսաւորութեան համար. բայց և այնպէս քանի մի հանգամանք, որ գուցէ անչափ է բարձրագոյն հողեր իշխանութեան, աւելորդ չեմ համարում չափոնել, որ եթէ մեր դպրոցների հոգաբարձուների անհոգութիւնն ու թուլութիւնը չը լինէր, գուցէ դպրոցները չը կարօտէին այսպիսի մեծաքանակ օժանդակութեան: Ամենազլխաւոր աղբիւրը, որ երբեմն կապալով արւում էր աւելի քան 2000 ուտբ., աժմ այնքան ընկած է, որ չէ բերում արդիւնք ո՛չ աւելի քան 1100 ուտբ., ըստ որում խնամութիւն պահպանելով և անհոգ գտնուելով՝ վաճառականները արտաքու իրաւանց վաճառում են անկնիք մոմեր, իսկ հոգաբարձութիւնն ամենեկին միջոցների չէ դիմում նոցա առաջն առնելու: Գանձակեցի ոմն, որ անս երեք տարուց աւելի է պարտ է 700 ուտբ. հոգաբարձութիւնն ցարդ ոչինչ հոգս չէ արած այն փողը նորանից ստանալու. բացի այդ, իրա մօտ եղած գումարն առանձին գրաւականով տուած լինելով տոկոսով՝ ստանալու համար ամենեկին չէ մտածում: Թողնում եմ դեռ ևս այն, որ այս տարի քանի անգամ չօգուտ դպրոցի պարահանդէս կազմեցին, ժողովրդից ժողովել են աւելի քան 200 ուտբ., դպրոցը այդ գումարից փոխանակ չահուելու, լսում ենք, որ 50 կոպէկ էլ պարտ է մնացել իրենց չափոնի պատճառներով: Խնչպէս երևում է, մեր դպրոցների հոգաբարձութիւնը արիաջանութիւն և գործունէութիւն իրենց պարտականութիւնից դուրս համա-

րելով, փոխանակ ունեցած միջոցները զօրեղացնելու, ունեցածն էլ կորցնելով՝ պատրաստի գումարի ետևից է ման գալիս: Ի հարկէ, եթէ կուրօրէն կատարելով հրամանը դպրոցների կարևոր ծախքերը եկեղեցիների արդիւնքից հողալով պահպանենք նորա գոյութիւնը, երկու կողմից կը վնասուենք՝ մէկ, որ դպրոցների աղբիւրները անհոգութիւնից սպառուելով ապագայում կ'ոչնչանան, միւս, որ եկեղեցիքը հարստահարուելով հետզհետէ ուժասպառ կը լինին, որոց գումարը ապագայում շատ հարկաւոր է մեզ. եթէ այժմ խնայողաբար չը վարուենք, ապագայում միջնակարգ դպրոցի վերածելու լոյսից բոլորովին կը զրկուենք: Այս ամենը ասջքի առաջ ունենալով, և եկեղեցու շահերը պաշտպանելով, որ ի զուր կորուստի է մատնւում, անկարող եմ լինում եկեղեցու գումարից օժանդակել դպրոցներին, մանաւանդ այս սուղ միջոցում, որ եկեղեցին ինքն էլ դրամական կարիք ունի. եկեղեցապատկան շինութիւնը, որ բոլորովին դեռ չէ աւարտուել, ունի դեռ ևս կարօտութիւն ծախուց, բաղանիքը, որ հետզհետէ քաղքատուելով փլուելու վրայ է, կարևոր է վերանորոգել: Քաղաքական կառավարութիւնը քանիցս կարգադրած և հրամայած է այդ մասին, իսկ ես այսօր, վաղը ձգելով ժամանակ եմ խնդրել մինչև վարուենք, հակառակ դէպքում, չափոնի օրինաց համաձայն, արձանագրութիւն կը կազմեն և կը քանդեն, և դորա համար բաւական փող է հարկաւոր: ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆԸ ինչպէս բարեհաճեց նկատել, կարևոր է շինել երկսեռ դպրոցներ և չաջողաբար. այս ամենը ի կատար ածելու համար անչուշտ կարևոր է խնայողաբար շարժուել: Այս-

պիսի սուղ միջոցներում եկեղեցապատկան գումարները ծանր եւմ համարում գործադրել և, ի նկատի առնելով վերուիշեալ հանգամանքները, դժուարանում եմ այդպիսի մեծաքանակ գումարով օժանդակել զպրոցներին: Այս մասին չափանելով հոգևոր Ատենիդ, խոնարհաբար խնդրում եմ այս չափարարութիւնը առաջի առնել ի տնօրինութիւն Սրբազան Առաջնորդի, ես չլսս ունիմ, որ Նորին Բարձր Սրբազանութիւնը պաշտպան լինելով շահուց եկեղեցւոյ և զպրոցներին՝ հարկաւոր տնօրէնութիւնը կ'անին:

Չը գիտեմ հոգևոր կառավարութիւնը ինչ կարգադրութիւն է արել. սպասում էի պատասխանին: Հոգաբարձութեան նախագահ հայր սուրբն անցեալ ամի դեկտեմբեր ամսում Տփլիսից վերադառնալով չափանեց, որ Սրբազան Առաջնորդի հրամանի համաձայն պէտք է բոլոր հաշիւները չանձնուի եկեղեցւոյն և ցուց տուեց մի ինչ որ օրագիր, որով հոգաբարձութիւնը վճիռ է կապանում չանձնելու համար. այն օրից ցարդ սպասուում է իրագործմանը: Տեսնելով, որ Սրբազան Առաջնորդի հրամանը կատարուում է և հրահանգի համաձայն սբ. Յովհաննէս եկեղեցւոյ վերաջ պարտք է մնում կառավարելու իւր զպրոցները՝ իսկու՞ն հատուցի 500 ուրբ.: Այժմ միայն տեսնում եմ, որ հոգաբարձութեան կողմից այդ էլ մի նոր տեսակ մեքենայագործութիւն էր եկեղեցու այդ փողը ստանալու համար: Գ. Գիւղացին մի քանի հոգուց ստորագրած վճիռը օրինաւոր համարելով և նոյնը Սրբազան Առաջնորդի կողմից պաշտպանութիւն գտած լինելով ինձ մեղադրում է, թէ ինչպէս ես համարձակուել եմ իշխանաւորի չարգանքով վերաբերուած ժողովի վճռի դէմ խօսելու

Այդ դեռ հարց է, պ. Գիւղացի. Սրբազան Առաջնորդը արդե՞օք այդ ժողովրդական վճռի երեսը տեսել է, թէ հիմնուել է միայն հոգաբարձութեան չափարարութեան վերաջ: Հաւատի եմ, որ հոգաբարձուները իրենք էլ կարմրած կը լինէին իրենց պաշտպանի հետ, եթէ այդքան փոքր թուով ստորագրութեան թերթը առաջարկէին Սրբազանին՝ նրան ժողովրդական վճիռ համարելով. բայց թէ ինչ գոյնով են գրել իրենց չափարարութիւնը՝ չը գիտեմ. ախոս որ պ. Գիւղացին այդ չէ պարզաբանել. ցանկալի է իմանալ, հոգաբարձութիւնը չափանել է Առաջնորդին, թէ իրենց մօտ եղած գումարը տոկոսի մէջ է, թէ ցարդ չէ չանձնել նրան եկեղեցւոյ վարչութեանը և թէ մինչև անգամ շատ վաղուց ժամանակը լրացած պարտամուրհակի գումարը և ապառիկները թէ նուիրատուութեանց և թէ թատրոնի ներկաչացումից մնացած չեն ժողովում, այլ դիմելով չափատուում են եկեղեցւոյ կողմէիները սպառել:

Չեմ ուրանալ ասածս և չեմ էլ կարող լսել նրան լեղաչջած, ինչպէս պ. Գիւղացւոյ սովորութիւնն է: Նրբ հոգաբարձութեանը առաջարկեցի իրենց մօտի եղած գումարը ծախսել և ապա դիմել եկեղեցւոյ օժանդակութեանը, հոգաբարձուները պատասխանեցին, թէ իրենց մօտ գումարը տոկոսով է տուած, այժմ ստանալ անկարելի է, թէև պալմանին համաձայն մաս առ մաս պէտք է ստանալ: Հարց է, իւրաքանչիւր մասը իրա ժամանակին ստացուում է, թէ այստեղ էլ խնամութիւնը մեծ դեր է խաղում, պատասխանեցի: Հոգաբարձու Գ. Ս. Յ. քե՛նակալի 700 ուրբ. և ուրիշ ապառիկներն էլ տոկոսի մէջ են, ինչի չէք ստանում. եթէ այդպէս է, եկեղեցւոյ գումարն էլ իսկապէս

տոկոսի մէջ է, ահա ձեզ տոմարը: Իմ առաջարկութեանս՝ թէ ինչի նուիրատուների ապառիկները և պարտամուրհակի փողը չեն ստանում, նոքա, Գիւղացու պէս, իմ իրաւունքից դուրս համարելով՝ ալդ հարցերը առանց պատասխանի թողնելով, ուղղակի ասացին՝ եթէ չը տաս փողերը, դպրոցները կը փակուեն: Ես պատասխանեցի. եթէ անկարող էք կառավարել կամ հեռացէք կամ փակեցէք. ով կարող է նա կը բանալ և կը կառավարէ. ես չեմ ասել՝ ծախեցէք տոկոսաբեր թղթերը, ալ ասել եմ՝ չանձնեցէք եկեղեցուն, եկեղեցին կը պահպանէ դպրոցները — ահա իրողութիւնը:

Որպէս զի հարցը պարզեմ, կրկնում եմ. մեր հոգևոր ծխական դպրոցները կառավարելու համար ՎԵՀԱՓԱՌԿԱԹՈՒՂԻԿՈՍՄԻՅ տուած հրահանգի մէջ դպրոցները պահպանելու պարտականութիւնն զրած է եկեղեցիների վերայ. ոչ մի չօրուածում չը կալ լիշատակած, թէ ուսումնարանը կարող է զրամագլուխ ունենալ: Հասկանալի է, որ հոգաբարձուների մօտ չը պէտք է մնալ աւելորդ որիւրիցէ կոպէկ, ալ դա պէտք է լինի եկեղեցու մէջ, ըստ որում եկեղեցին է ուսումնարանի պահպանողը կամ լաւ ևս ասել՝ զանձարանը: Մեր Գանձակ քաղաքը դպրոցների փակուելուց առաջ ունենալով իրա մօտ գումար, չը կամեցաւ՝ ենթարկուելով սրբազան Սինօղի ընդհանրական հրամանին՝ չանձնել տեղական հոգևոր իշխանութեան տրնօրէնութեանը. դպրոցները բանալուց վետոյ դարձեալ չը կամենալով հետևել հրահանգի կանոններին և վիճակաւոր Առաջնորդի հրամանին և չանձնել եկեղեցու վարչութեանը՝ իրուր պատճառ է դառնում՝ դպրոցների անելանելի դրութեան և այս անախորժ անցքերին:

Գալով աղքատանոցի գումարի մասին. պ. Գիւղացին ասում է, որ ալդ հիմնարկութեան գործունէութիւնը 1884 թուականում դադարելուց վետոյ, նորա հիմ. գումարը մօտ 7000 ու. նախ չանձնուեց մի վաճառականի և ապա հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ ինձ և ալլն: Նախ քան ինձ չանձնելը, թէ ո՞ր վաճառականին են չանձնել՝ չը գիտեմ. միայն ալքանը գիտեմ, որ ես տեղական հոգևոր կառավարութեան հրամանի հետ ի 17-ն չունիսի 1885 ամի № 326 ստացել եմ 12 հատ մասնաւոր ու գըրաւականեալ պարտամուրհակներ 6714 ու. 70 կոպ. և պատրաստի դրամ 171 ու. 96 կոպ. հոգևոր կառավարութեան հրամանի համաձայն, պարտաւոր էի ժողովել պարտատէրներից ալդ գումարը. ինձ չալտնի պատճառներով չը ժողովեցի, լաւ համարելով նոյն անձանց վերալ թողնել տոկոսով. ալդ գործով հետաքրքրուողներին միշտ աշխատել եմ բաւականութիւն տալ: Շատերից մինը ասեմ. 1886 ամի նոյեմբեր ամսումն նախկին չաջորդ Անանիա վարդապետի նախագահութեամբ հոգաբարձական ժողով կար. ալնտեղ կալին և մասնաւոր անձինք: Հարց բարձրացաւ աղքատանոցի փողերի մասին. ես իսկոյն հանեցի հոգևոր կառավարութիւնից ինձ չանձնած հրամանը և նորա հետ ուղարկած պարտամուրհակները. երբ մի առ մի հաշուելով տեսան, որ ինձ չանձնած գումարը նոյնութեամբ մնում է առանց ժողովելու, շատերի նման իրանք էլ կարծել են, թէ իմ սեպական առևտրի մէջ եմ բանացրել: Ալդ չօսը, որով ցանկանում էին ինձ կարմրացնել, իրուր անցաւ. ժողովականներից ոմանք սկսեցին ինձ մեղադրել թէ ինչի չեմ ժողովել գումարը. իսկ հոգ. պ. Մելիք-

Բէկլարեանցը ներողութիւն խնդրելով մի քանի խօսք ասեց, ի միջի ալոց պաշտպանելով ինձ ան տեսակէտից թէ ես բողոքովին արդարացնում եմ պ. Սահակեանցին, որ փողերը չէ ժողովել, ըստ որում դեռ ես չը ժողոված՝ աչքան բամբասանքի է ենթարկուել, եթէ ժողովէր և պատրաստի ունենար իրա ձեռքին, ո՞վ գիտէ քարկոծուէր: Վերջացնելով իրա խօսքը զիմեց ինձ ասելով «հրապարակաւ ներողութիւն եմ խնդրում, որ բամբասել եմ Ձեզ»: Միւս հոգ. Ղ. Ս. Յովհաննիսեանցն էլ իրա տեղից վեր կենալով բռնեց ձեռքս և ասաց. «ես ես ներողութիւն եմ խնդրում, որ իզուր բամբասել եմ քեզ»: Իսկ նախագահ Անանիա վարդապետը ուղղակի ասաց. «աղչիւ մարդիկ երբէք մարդի ետեից չեն խօսիր»: Պ. Գիւղացի, միամիտ կանգէք, այժմ էլ նոյն դրութեան մէջ է Ձեզ պէսների չնորհիւ միայն մասնաւոր փոփոխութեամբ. հետաքրքրուողներ չամար դուռս բաց է, հաշիւս պատրաստ:

Գալով երեսփոխանութեան հաշուի և հաշուէտութեան մասին, ես երբէք իրաւացի նկատողութիւններից նեղացած չեմ, այլ միշտ աշխատած եմ օգուտ քաղել: պ. Գիւղացու ասելով, որպէս թէ ես իմ երեսփոխանութեան ժամանակամիջոցում ժողովրդին հաշիւ չեմ տուել և ալն. չը գիտեմ՝ չը գիտէ, թէ գլխութեամբ անտեղեակ է ձեռնում: Ժողովուրդը ընտրելով ինձ երեսփոխան, սփորական կարգով ինձ հետ էլ ընտրել է և հաշուէտեսներ, որոնք իւրաքանչիւր տարուս վերջը հաշուէտեսանքն մանրազնին քննութեան են ենթարկում, ուրեմն էլ ի՞նչ հարկ կար մէկ էլ ժողովրդին հաշիւ տալ, քանի որ նորա ներկայացուցիչը արդէն կա: Գուցէ պ. Գիւղացի

ցին ցանկանում է հաշուէտութեան վերաբերմամբ վերադառնալ հին սխտեմին, որ երեսփոխանը հաշուէտեսանքը գրած պատրաստած դնում էր մի խանութի մէջ, խանութպանը անցուղարձ անողներին կանչում էր ստորագրելու. պատահողը առանց ուշադրութիւն դարձնելու գրուածի վերայ՝ ստորագրում էր. դա միսթարական չէ: Ժողովրդին հաշիւ տալու կարևորութիւնը զգացող «պ. Գիւղացին» — ինքնակոչ հողաբարձուն, արդեօք իր ընկերներով մտածեց երբ և իցէ զպրոցների հաշիւը տալ ժողովրդին: Նոքա թատրոններ ներկայացրին, պարահանդէս կազմեցին, այդ մասին հաշիւ տուին. չէ որ բաւականին ժամանակ է զպրոցների հողաբարձուներին հաշիւ չեն տուել, թէև այս մասին շատ անգամ եմ կրկնել հողաբարձութեան նախագահին, եթէ որ զպրոցները չեն կառավարում, լաւ է հաշիւ տալ ժողովրդին, ծանօթացնել զպրոցների դրութեան հետ: Ինչպէս հաշիւ տալին քանի որ նուիրատուութեան ապառիկների հաշուէտեսանքը անհետացած էր, միայն երկու տարուց վետոյ է երևում. պատճառը վետոյ կը պարզուի: Ինչ մնում է շինութեան 10—12 հազար ուրբ. ծախսած հաշիւներին, դորա պատասխանատուն ես չեմ, դորա համար ժողովրդից ընտրուած շինութեան հողաբարձու կա՞ նրան զիմեցէք: «Պ. Գիւղացին» մի ակնարկով կամենում է իմ պատուիս արատ բերել ասելով թէ ես շինութիւն չինել շատ եմ սիրում. այդ մասին հարկ եմ համարում մի երկու խօսք ասել: Պ. Գիւղացի, եկեղեցական շինութեան շատակազիծը (պլանը) ես չեմ վերցրել, այլ իմ նախորդ պ. Ն. Տէր-Ներսէսեանցը եկեղեցական շինութեան միայն պլանի համար, կարծեմ, տուել է

400 ոււր., եկեղեցական շինութեան ներքին չարկը իր նկուղով նորա երեսփոխանութեան ժամանակն է շինուած, հին չաջորդարանը նորա ժամանակով է քանդած, պ. Ղ. Ս- Յովհաննիսեանցին եկեղեցական գումարից 250 ոււր. ու հողեր կառավարութեան քարտուղարին այգետեղին չատկացները նոյնպէս նորա ժամանակով է եղած. խնդրեմ իմ գործունէութիւնս քննութեան ենթարկելու ժամանակ վերովյիշեալները ի նկատի ունենալ, որ դռքա եղած են պ. Տէր-Ներսիսեանցի ժամանակ և ո՛չ իմ. զուշացնում եմ, որ անգիտակցաբար իմ գործունէութեան վերայ չը գնէք: Ինչ մնում է Կուղանեանցի քարվանսարալի շինութեան մասին, շինութիւնը թէ նախկինը և թէ ներկան եղած է պ. Ա. Իւղբաշեանցի կարգադրութեամբ և ո՛չ իմ: Ես վերջինս գործել եմ իբրև նորա հաւատարմատար. պատրաստ եմ շինութեան մասին ամենամանրամասն բացատրութիւն տալ ցանկացողներին դատած սխալմանց մասին: Նախ քան խօսքս վերջացները աւելորդ չեմ համարում մի քանի խօսք էլ ասել պ. Գիւղացու իրաւացի նկատողութեան մասին: Շատ ուղիղ է նկատել պարոնը, որ աշխարհիս մէջ տևողական ոչինչ չկայ, էս օրուալ հարուստը կարող է վաղը աղքատ լինել, և բաղդաւորը՝ անբաղդ և այդ կանխօրէն նախատեսուած է. այդ իսկ պատճառով օրինաց 1023 չօղ. № I, հատ. մասն I կարգադրած է եկեղեցական գումարները շահեցնել կամ արքունական բանկերում կամ օրինաւոր ապահով գրաւակաւներ ստանալով և միանգամա՛ն արգելում է երեսփոխաններին եկեղեցական փողերը մասնաւոր մարդկանց կամ անապահով հաստատութիւններին շահեցողութեան տալ.

իսկ մեր դպրոցների հոգաբարձութեան ներելի է 1600 ոււրլի պահել իրանց մօտ առանց շահեցողութեան մօտ հինգ ամիս. շնորհակալութիւն նորա այդ սրտացաւութեան համար: Որքան ինձ չափոնի է, պ. Գիւղացին սուրբ Լուսաւորիչ եկեղեցու ծխական ժողովուրդ է, ինչի իւր հոգատարութեան և սրտացաւութեան խնամքից զրկում է նորան (սրանով չեմ կամենում նրան զրկել սուրբ Յովհաննէս եկեղեցու մասին խօսելու իրաւունքից), չէ՞ որ նորա գումարը գտնոււմ էր բանկումս. ինչ էր պատճառը, որ նորա երեսփոխանը բանկից բերել տուեց ու ինչ աբաւ. գուցէ զետեղել է աւելի ապահով բանկում, ինչի չի խօսում. չը լինի անիրաւ. խնամութիւնը աչտեղ էլ խաղում է իւր դերը: Պատասխանը թողնում եմ Գիւղացու: Առաջիմ ալքան:

Նախկին երեսփոխան սուրբ Յովհաննէս մայր եկեղեցւոյ՝

Ա.Ղ.Է.ԲՍԱՆԳԻ ԻՍԱ.ՀԱԿԵԱՆՑ.

Ի 13-ն Դարբի 1889 թ.Գ.

Ի Գ ա ն ճ ա կ :



34

Сарм  
1101

и ф

Дозволено цензурою. Тифлисъ, 5 Апрѣля 1889 г.

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
НАУКИ И ОБРАЗОВАНИЯ  
Восточный отдел  
СССР

Типографія М. Д. Ретиніанца. На Гол. просп. д. № 41

2013

« Ազգային գրադարան

55521



NL0051469

